ՆՈՐ-ԴԱՐ

№ 62 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Ուրբաթ, 16 Ապրիլի 1893 Ուրբաթ, 16 Ապրիլի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 62

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկի
Նա ետերդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 իջ մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների համար կրկնապատիկ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ի գիտութիւն ընդհանրութեան յայտարարում է, որ նրա դիւանատան, ցանկացողները ապրիլի 14-ից սկսած. ամեն օր կարող են տանայ Թիֆլիսի ընտրողների լրացուցիչ ցուցակը առաջիկայ չորս ամեակի 1893—1897-ի համար։

(226) 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Ք ր ո ն ի կ ո ն.—Թիֆլիսի Վարչի Ընկերութեան ժողովի մասին մի պատասխան. Երկու անձնասպանութիւն. Գայաթաշուց. Նոր-Նախիջեւանից. Բաքվից. Նոր-Նախիջեւանից.

Մեր քաղաքի վարչութեան կազմը.

Ե ղ ե ր ա կ ց ո ւ թ ի ւ ն ն ե ր.— Աչքը սանդրթալու. Բաշիում.

Ք ա ղ ա ք ա կ ա ն.— Հայ՞անգլիական միութիւն. Քաղաքական լուրեր.

Խ ա ռ ն լ ո ւ ր ե ր.

Հ ե ւ ա գ ի ր ն ե ր.

Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն. — Որբը.

Տ ե ղ ե կ ա տ ո ւ.

Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր.

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻ ՍՈՒՏԻՒ ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

—

Կիրակի, ապրիլի 11-ին Թիֆլիսի քաղաքային Լորիսղլի դահլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան ընդհանուր ժողովի մասին «Նոր-Դար»-ի նախորնեաց մի համարում կարճ տեղեկութիւն էր հրատարակուած։

«Արձագանք» Վարկի Ընկերութեան վարչութեան դէմ յարձակուելով, որի կառավարչը եղեան Ամատունին է, հարկաւոր է համարել մի յարձակումն էլ գործելու «Նոր-Դար»-ի դէմ, որ բանկերից և բանկային գործերից շատ հեռու է։

«Արձագանք» ասում է.

„Ոյոր տեղական լրագրները միաբեան դատապարտում են՞այն ժողովի վարմունքը, որ կամայականօրէն և անարդարութեամբ պաշտօնից զրկեց, արտաքսեց Քաղաք. Վարկի Ընկերութեան գանձապահ պ. Նազարեթ Տէգրանեանին“։

և աւելացնում է.

«Յաւում ենք որ ամբողջ կովկասեան մամուլի մէջ մի քացատութիւն էր կազմել «Նոր-Դար»-ը, որ մինչև անգամ հիացած է մնացել»։

Եւ իւր ասածին երբև ապացոյց մէջ է բերուած «Նոր-Դար»-ի հետեւեալ նկատողութիւնը.

«Մեծ պատասխանատուութիւն էր տեսնում իշխան Ամատունու գլխի վրայ. վիճաբանութիւնները խիստ սուր կերպարանք էին ստանում, յարձակումը կատարի և սանձարձակ էր, որ հանդիպում էր հիանալու չափ սառնասրտութեան»։

Մինչ «Նոր-Դար»-ի այդ նկատողութիւնից պէտք է եզրակացնել, որ նրա «հիացումը» վերաբերում է գանձապահ պ. Տիգրանեանին արձակելու հանգրնին։

Մենք ոչ Վարկի Ընկերութեան գործն ենք քննել և ոչ նրա մէջ ծառայող մի որ և է անձի պատասխանատուութիւնը. ոչ պատասխանել ենք և ոչ էլ դատապարտել բանկի վարչութիւնը, կամ նրա գանձապահին։

Մեզ անծանօթ գործի մէջ սովորութիւն չունենք դատաւոր կանգնելու։

Յայտնի է որ Թիֆլիսի Վարկի Ընկերութեան գործերը քննելու համար փինանսների մինիստրութիւնից յատուկ քննիչ էր եկել Թիֆլիս։ Այդ քննութեան հետեւանքը երբ պատշաճաչափ կը յայտնուի, մենք կը հրատարակենք և այն ժամանակ կարող ենք այս կամ այն կողմը արդար կամ մեղաւոր գտնել։

«Արձագանքին» լաւ յայտնի է, որ բոլոր բանկերի մասին էլ հազար ու մի բան են ասում, այն էլ յայտնի է պիտի լինի նրան, որ «Նոր-Դար»-ը այդ ասածների վրայ հիմնած ոչ մի բանկային գործիչի վարմունքը ոչ դատապարտել և ոչ էլ գովել է, ինչպէս և այս դէպքում Վարկի Ընկերութեան գանձապահին արձակելու մասին դեռ ոչ մի կարծիք չէ յայտնած։

Իսկ ինչ վերաբերում է վերը մէջ բերած «Նոր-Դար»-ի նկատողութեանը մինչ ամեն տեղ և շատ վաղուց չէինք խօսում իշխան Ամատունուն գլուխ գալու մասին՝ մինչ շատ վաղուց այդ մասին պատրաստութիւններ չէին տեսնուած։ Այդ հօ ամենքը գիտեն։

Մինչ ժողովում յարձակումները կատաղի չէին... մինչ իշխան Ամատունու կողմից պաշպանած վերին աստիճանի սառնասրտութիւնից չէր, որ նա 45 ձայնով ընդդէմ 4-ի ընտրուեցաւ վերջապէս կառավարիչ բանկի։

Կորցնէը մի վայրկեան նա հատասրտակշռութիւնը, մենք խորը համոզուած ենք (ժողովում մեր բոլոր տեսածը և լսածը ի նկատի առնելով) որ ոչ մի ընտրութիւն, այլ ժողովը կը վախուէր ահագին սկանդալով։ Ուրիշը լինէր իշխան Ամատունու տեղը նրա բանը վերջացած էր, այդ ասում էին շատ շատերը։

Այդ սառնասրտութեան մասին է

Երեխաները քնակում էին երկրորդ յարկում. Պիէռ և Արման ննջում էին միասին մէկ սենեակի մէջ, իսկ փոքր Սիման յատկացրել էին առանձին մի սենեակ։ Ննդեան նախընթաց գիշերին Սիման տաք սենեակում, փափուկ անկողնի մէջ նստած, սիրտը ամուր բարախում էր. կարծես մի այդ ցուրտ ու բուքին փողոցներում մնացած միորբերեակայ լինէր. սենեակի պատերը զարդարուած էին գոյն գոյն գորգերով. կահ կարասիքի չքեղութիւնը և մաքրութիւնը, զանազան փոքր երեխայական խաղալիքները և այդ բոլորի մէջտեղ տեսնուած Սիմանի սպիտակ և կակիկ անկողինը իւր վարդագոյն վարագոյրներով՝ վկայում էին նրա հանգուցեալ մօրը դէպի իւր զաւակը ունեցած սէրը և գգուանքը. կոմսուհին մի առանձին պարծանօք լսում էր իւր բարեկամուհիներից երբ նրանք տեսնում էին այդ ճաշակի սարք ու կարգը «Ախ սիրելիս, մեզ նրա հասակում այդպէս չէին խնամում»։

Բայց ինչու է այժմ այստեղ նստել միայնակ Սիման և ինքզինքը այդքան դժբախտ զգում. Նա զգում է մի այն ժամանակից երբ մայրը մեռաւ, կարծես ամեն ատն փոխուել է իւր շուրջը։ Այն քաղցր համբոյրները, փաղաքշանքները, գգուանաց և սիրոյ բոլոր նշանները խափան կորել են արդեն։

Դեռ հազիւ ուղեորդ տարին մտած երեխան, անկարող էր մահուան դառն նշանակութիւնը հասկանալ. այդ փափուկ հասակում նրա անմեղ ուղեղը բոլորովին այլապէս էր բացատրում և

ներկայացնում իւր աչաց առաջև պատեւի մօր աներեւոյթանալը։

Նա վերացել էր երկինք. մի հեռաւոր լայնատարած երկիր։ Անդ՝ հրեշտակների գուսանների հետ խառնուած և գլխին վարդի պսակ դրած, երջանիկ և երանելի օրեր էր անցկացնում և ուր՝ կարծում էր, մի օր, ինքն ևս կը գնայ և կը տեսնէր իւր անմոռանալի մայրիկը։

Կոմսուհուդոյն մաշիչ չեղոյ ամուսինը աճապարել էր ուղարկել իւր զաւակները Վերսայլ, իւր մօր մօտ. այնտեղ նրան հագցրել էին սև հագուստ։ Երբ նրանք հարցնում էին պատճառը, նրանց մեծ մայրը, առանց՞ ոչինչ պատասխանելու նայում էր արտասուալի աչքերով նրանց և լալիս։ այդ նրանց վրայ շատ վատ էր ազդում, որ նրանք մի շատ ծանր և վշտալի հարուածի ենթակայ են այդ արդէն զգում էին։ Ինչ ժամամակից ետոյ ինքն կոմսը ևս գալիս է Վերսայլ և երեխաների պարտադուման մասն գալու միջոցին պատահում նրանց։

«Ո՞ւր է մայրիկը» հարցնում են նրանք միաբերան։ Նա գրկում է նրանց գորովալից կարօտով և արտասուելով. Խեղճ հայրիկ, նա այդ րոպէին ոչքան վշտահար և տխուր էր...

Սիման դեռ լաւ չէրում էր որ այդ օրը նա նկատեց իւր հօր վրայ մի ինչ որ փոփոխութիւն, որը իւր երեխայական միտքը և դատողութիւնը չէին կարող բացատրել։ Միայն այնքան պարզ տեսել էր, որ հայրիկը սկսած այդ օրից՝ չէր սիրում և գգւում իրեն

մեր հիացումը, գործի մասին մենք ոչ մի կարծիք չենք յայտնել։

Եւ ինչպէս չը հիանանք երբ այսպիսի տեսարանների ենք հանդիպում։ Վեր է կենում տեղիցը մի վորձուած և երկարամեայ հաշտարար դատաւոր՝ պ. Ղորղանեանը և ասում, որ վարչութեան ցոյց տուած «ինստրուկցիան» գոյութիւն չէ ունեցել և յայտնում է, որ այդ «ինստրուկցիան» գոյութիւն է ստացել հենց—իւր ստորագրութեամբը։ Պ. Մելիք-Բեգլարեանը իւր անխնայ յարձակումները իշխան Ամատունու դէմ վերջացնում է նրանով, որ ասում է. «անկեղծօրէն համոզուած եմ, որ իշխան Նապօլէոն Ամատունին գանձապահ պ. Տիգրանեանի դէմ անձնական ոչինչ չունի, ինքս շատ յարգում եմ իշ. Ամատունուն և ապացոյց իմ խորը յարգանաց յայտնում եմ, որ նրան բաց՝ սպիտակ քուէ տուի»...

Հիանալու չափ տեսարաններ են և այդ մասին, այսինքն ժողովի արտաքին մասին է եղել մեր նկատողութիւնը։

Եթէ ժողովի արած որոշումների կամ Վարկի Ընկերութեան գործերի մասին մենք կարծիք յայտնելու լինենք, չենք առաջնորդուել նրանով թէ «բոլոր տեղական լրագրերը միաբերան» ինչ են ասում։

Ցաւալին այստեղ այն է, որ հայերը անձնական հակառակութիւնից միմեանց վնասելով չեն տեսնում որ դրանով օտարներին են գուարճացնում։ Ցաւալին այն է, որ «Արձագանքը» այս տարի արդէն երկրորդ անգամն է, որ հրապարակի վրայ մի որոշ տրամադրութեան հանդիսանալով փորձ է ա-

---

այնպէս ինչպէս առաջ։ Ահա թէ ինչու խեղճ Սիման այդ ամբողջ գիշերը, փոխանակ հանգիստ քնելու, նստել էր անկողնու մէջ և տխուր ու տրտում մտածում, մինչ եղբայրները քնում էին կից սենեակում։

Հայրիկը, մտածում էր Սիման, ինձ չէ սիրում այլ ևս. ինձ որ մի ժամանակ գերադասում էր քան միւսները....՝ Նա հրկինքն տեսնում է Վերսայլի պատեզի ծառայողին ուր՝ առաջնն անգամ նկատել էր այդ բանը, և այժմ ինչպէս առաջ, չէր կարողանում բացատրել հօրը սառնասրտութիւնը իւր վերաբերմամբ, երբ նա, դեռ մօրը կենդանի ժամանակը դժուարութեամբ էր բաժնուել իրանից։ Այդ օրը այնտեղ նրանք չրջում էին իրենց դաստիարակչուհի Մարիի հսկողութեան ներքոյ։ Հանկարծ գալիս էր հայրը. Սիման ուրախութեամբ վազում է նրա գիրկը, բայց երբ տեսնում է հօր սառը դէմքը և ոչ սովորական համբոյրները, իսկոյն գուշակում է, որ դադրել է այնուհետև իւր հօր սիրելի լինելուց, վախենում էր խեղճը թէ մի գուցէ այդ օրը կամ ուրիշ ժամանակ մի որ և իցէ վատ բան արած լինէր հօրը կամքի հակառակ։ Ինչու համար երբեք այդ օրը այդպէս հրամայեց «գնա մատրուամազիլի մօտ», մինչ առաջ նա այդպէս կանչէր, երբ կուզէր յանդիմանել կամ պատժել։ Նա Պիէռը և Արմանը փաղաքշելով տարաւ իւր հետ իսկ Սիման մնաց... Եւ մինչև այդ օրը՝ ցարդ հայրը խօսում էր նրա հետ, միևնոյն հրամայական և կծու կերպով։

նում այդ տրամադրութիւնը «Նոր-Դար»-ի դէմ ուղղելու։

—

Ապրիլի 14-ին օրը կէսօրին Թիֆլիսի կենդրոնում, Գոլովինսկի պրօսպեկտի վրայ Մուխրանսկու տանը գանուող «Պօր-Ղվինօ» ճաշարանի Բիլիարդի բաժնում, ոչինչ բանից երկու մարդ սպանուեցան, որ մի քանի վայրկեան առաջ միմիանց գոյութեան մասին տեղեկութիւն անգամ չունէին։ Վրացի Ի. Բախուտով և Նապոլեվ խաղում են միասին նարդի. Ներս է մտնում Իսրաֆիլ-բէգ Ապալաբովը նայում է խաղին և խաղի մասին նկատողութիւններ է անում։ Մէկ երկու խօսքի գալով Բախուտով նրա նկատողութիւնից նեղացած վեր է կենում տեղից և ապտակ է տալիս Իսրաֆիլ-բէգին, վերջինս անմիջապէս հանում է սուրը և խրում Բախուտովի կողքին, այնպէս որ աղիքները գուրս են ընկնում, բայց տարօրինակ սա էլ անմիջապէս հանում է սուրը և Իսրաֆիլ-բէգին վրայ խրում։ Բախուտովը հենց Ճաշարանում ընկնում մեռնում է, բժիշկները ոչինչ չեն կարողանում օգնել. Իսրաֆիլ-բէգի վրայից մի կառապան քաշում հանում է սուրը այնպէս որ ինքը գուրս է գնում, նստում կառքը և գնում հիւանդանոցը, որ և երեկոյեան վախճանում է։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Թեմ. դպրոցի քննութիւնները, ասում են, պէտք է սկսեն Զատկից յետոյ՝ իսկոյն։ Գովելի է այդ որոշումը։

Մեզ նախիջեւանցիներս չէ գթալի, որ թեմական առաջնորդ ունենք։ Սակայն գթալին այն է, որ այսքան չատ

պով։

Խեղճ Սիմա, այդ մտքերը մաշել և փոխել էին նրան.—Արդար եմ ես բոլորովին, բնաւ, բնաւ չանցանք չունիմ—կրկնում էր նա անդադար։

Երբ դեռ մայրը կենդանի էր, սովորաբար, առաւօտ վաղ զարթնում և վազում էր նրա մօտ, յետոյ հայրիկն ուր նա շատ կը մնար։ Այժմ իսպառ վերջացել էին այդ այցելութիւնները։ Անբասիրան քնքոյշ բառերը, չի կար գորով և փաղաքշանքներ. այժմ կարծես հայրը չէր ցանկանում նրա վրայ նայել. Սիման այդ բոլորը լաւ զգալով, ինքն ևս չէր համարձակւում նրա աչքերին ուղիղ նայել։ Չէր համարձակւում մօտենալ և համբուրել նրա ձեռքը, այն օրից սկսած, երբ նա խիստ կերպով վանեց նրան մէկ կողմ։

Նա աշխատում էր խելօքի և ուշիմ լինել. մադրմուազել Մարին նրան արդեն երբէք չէր յանդիմանում. իսկ հայրը այդ մասին ոչ մի խնդակցութիւն չէր ցոյց տալիս օրիորդին մինչև իսկ եղբայրները ընդ միշտ երես էին դարձրել... և ինքն դիմել։

Սիմանի վերսայլ ունեցած բարի մտքը որ նրան շատ սիրում էր, հիւանդ և խուլ, անկողնու էր ձգտում. իսկ Մարին երբէք չէր տանում նրա մօտ. օրին գանգատ յայտնէր. հիմը. բայց Սիման ան ու դողով էր յիշում և տեսնում նրան։

Շատ վաղուց ունէր նա մի բարեկամ «տրէխ», իւր կնքահայրը օրին պատահում էր երբեմն Եաղչիլիում. սակայն նա էլ, Մարիին բարեհաճ չե-

ԲԱՆԱԿՆ.—Այս գիշեր ժամը 3—4 սուրբ, երբ ես արդեն քնած էի, մարդիկ ինձ ասացին, թե Ալեքսանդրապոլի եկեղեցական դպրոցի հիմնադիր Գաբրիել Տեր-Գրիգորյանցը մահամերձ վիճակի մեջ է գտնվում։ Ես ինձ հանգիստ չէի զգում, որ չէի գնում տեսնելու իմ հին ուսուցչին, որի մոտ ես 10 տարի շարունակ սովորել եմ։ Ես 170 տարի հայոց պատմության ծեծկռտանքներից հետո, ահա մի նոր ցավ, որ ոչ միայն ինձ, այլև ամբողջ հայ հասարակությանը պիտի ցնցի։ Ես ինձ ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտեցնել այն մտքի հետ, որ Գաբրիել Տեր-Գրիգորյանցը, որ ամբողջ 40 տարի ամեն օր ինքն իրեն ոչ միայն չի խնայել, այլ ամեն օր ինքն իրեն ոչնչացրել է, որ ամբողջ 40 տարի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ամուսնության ազատությունը Ռուսաստանում

Ռուսաստանում ամուսնության ազատության հարցը վերջին տարիներին մեծ տեղ է գրավում հասարակական կյանքում։ Ամեն տարի ամուսնալուծության դիմում տվողների թիվը աճում է։ Ամուսնալուծության դիմում տվողների մեծ մասը կանայք են

ցեալ տարիները Հայաստան ուղևորած Փից Ֆերալդը, որը յայտնել է, որ Ռուսիայի հայերը գոհ լինելով իրենց վիճակից, Թուրքիայի հայերն ևս նախանձում են նրանց և ցանկանում են Ռուսիայի իշխանութեան տակ մտնել։

Ապրիլի 1-ին պիտի կայանար մի ուրիշ, աւելի ևս բազմամարդ ժողով նախկին մինիստր լորդ Նորդբրուկի նախագահութեամբ. նոյնպէս միտինգներ են պատրաստում նաև գաւառներում։

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Գերմանիայի պաշտօնական Թերթը Վիւհելմ կայսրի Հռոմ ուղևորութիւը մի նոր ապացոյց է համարում եռապետական դաշնակցութեան սերտութեան։

—Վեննայի սերբիական դեսպան Սիմիչը Հռոմ է ուղևորուել խտալական արքայական զոյգի ամուսնութեան 25 ամեակը շնորհաւորելու և Աէքսանդը Թագաւորի գահ բարձրանալը յայտնելու համար։

—Ապրելի 6-ին Բուքարեստում (Ռումենիայի մայրաքաղաքում) անկարգութիւնները պատահեցան, որի մէջ ընկան 21 ժանդարմ ծանր վէրք է ստացել, իսկ ժողովուրդից երկու հոգի, այն էլ Թեթև կերպով։

—Սերբիայում կատարուած չորս յեղափոխութիւնը Դոկիչի գործն են համարում, որ իրեն օգնական է ունեցել մի քանի արմատականներ, Բելգրատի բերդակալը, տեղական զօրքերի հրամանատարները։ Նապրեդնիակներն էլ արմատականների հետ են եղել. Նրանց պարագլուխ Հարուշանինին մինչև անգամ մինիստրութեան մէջ պատրաստ են առաջարկել, բայց նա մերժել է։

—Ունգարական լրագրներում հեռագիր է տպուած եղել, թէ Սերբիայի պատանի Թագաւորի կեանքի դէմ փորձեր են եղել։

—Սերբիայում բոլոր նշանաւոր պաշտօնները տուել են դարձեալ արմատականներին։ Վերջիններս ամեն կերպ աշխատում են ժողովրդին զգուշացնել որ ազատամիտների հետ կռիւներ չըսարքէ։

—Յունաստանի Ջանտէ կղզում երկրաշարժն ահագին վնասներ է պատճառել. 50 հոգի սպանուել է, 100 հոգի վիրաւորուել է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆՑԵԱԼ ԴԱՐԻՑ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

—

Սոփէ ԹերԹը լոյս աշխարհք է բերում տասն և ութերորդ դարից մնացած կենդանի նշխարքները, որոնք հիմա իրենց խստակազմ և կորաքամակ մարմինները պատրաստում են մեր նոր դարի սերունդի մէջ։ Նահեկանութիւնից զուրկ չէ անշուշտ գիտնալ, Թէ ինչ կեանք են ունեցած այդ դարաւոր ծերունիները։ Սուլթան բայազիդ մզկիթի բակում, բազմատեսակ համբոյրների դէմ առջև կքած է մի սպիտակամօրուս ծերուկ հաճի Մէհմէդ էֆէնդի, որ հարիւր երեսուն... գարուներ է տեսել։ Նա հաճոյալի կերպով պատմում է սրանից 115 տարի առաջ եղած դէպքերն։ Կը հաւանաք որ այս մարդը 58 անգամ է կարգուել, վերջին ամուսնութիւը սրանից երկու ամիս առաջ է կատարուել. կարելի է երևակայել, Թէ այդ անհատնում ամուսնութիւններից որչափ արարածներ կբարտադրէր, զաւակներն, Թոռներն, ծոռները, Թոռն Թոռներու իրենչ անվերջ երկարաձիգ շարք է անցել այդ տոկուն, անյողդողդ կեանքի վրայից, այն դարաւոր հաստաբուն ծառին պէս որի չուրջն ամեն օր անցուդարձ են անում, իսկ նա մնում է իր տեղը՝ տակալով հովին, ձիւնին ու բուքին։ Նրա ամենամեծ զաւակը, սրանից չորս տարի առաջ 95 տարեկան հասակում մեռել է Հիջազի մէջ. Հաջի Մէհմէդ ամեն առաւօտ իւր Մէվլեվիանէին դրան մօտ գտնուող տնից Թաղեթաքալէ երթալով Թէյ է խմում և յետոյ վերադառնում իր համբոյնների մօտ։ Սրանից 25 տարի առաջ նրա ատամները Թափելով, տասն և հինգի չափ նոր ատամներ են բուսել։

Երկրորդ Ներունին Թաւշան Ահմէդ անունով Թուրք է՝ հարիւր քսան տարեկան. ուրբաթ օրուանից զատ ամեն օր Գատը գիւղից Պօլիս է գալիս շոգենաւով և իւր սրագոյն ձայնը ձգում Պէէֆսաեենի մէջ, ուր մուեետիկ է։ Շատ ամուսնութիւններից յետոյ 100 տարեկան եղած մի կոջին նորից է ամուսնացել և այսօր չորս զաւակ ունի, որոնց մեծը տասն և չորս տարեկան է։

Էյուբի նահանգապետութիւում մի նահապար կայ, Տրապիզոնցի Հաջի Բարան, հարիւր... տասն և հինգ տարեկան։ Մեծունին առաւօտից մինչև իրիկուան Թէ չորժում Էյուբից Սիւդիջէ և վերադարձարար։ Ցայսնի չէ Թէ այս ծերունկը քանի անգամ է ամուսնացած, քանի զաւակ ունի և Թէ ատամները Թափել ու նորից բուսել է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍ ՍԱՑԻՆ ԴՈՐՏԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 ապրիլի։ — Բարձրագոյն Թոյլատրուած է Եւպատորիայի երկաթուղային ընկերութիւն կազմել՝ այդ նպատակով կազմուած կանոնադրութեան հիմունքով. նոյնպէս և Թոյլ է տրուած Եւպատորիայի նաւահանգստում, բացի քաղաքի և կառավարութեան օգտին վերցուող տուրքից, յշեալ ընկերութեան օգտին ևս ապրանքի ամեն մի պուդից և հատից տուրք վերցնել։

ՀՌՈՄ.—Թագաւորը ½ միլիոն նուիրեց վորձանքների զոհ գնացող բանուորների որդկերանց համար ինստիտուտ շինելու նպատակով։ Բորգեզի ամարանոցում յօգուտ նոյն հիմնարկի տրուած պարահանդիսում առանձին կադրելի կառավարողները պրինցներ էին։ 20,000 հանդիսական կար։

ՆԻՒ-ԻՕՐԿ.—Ամերիկական և օտար պետութիւնների գլխաւորական նաւերը այսօր այստեղ եկան. նրանց Մոնրոյի բերդից Թնդանօթաձգութեամբ ողջունեցին։

ԲԵԼՖԱՍՏ.—Բողոքական բանուորների խուժանը վիրաւորում ոստիկանութեան յարձակման ենթարկուեց. շատերը գլխներին ծանր վէրք են ստացել. 13 հոգի ձերբակալուած է։ Յարձակում երկու գունդ զօրք է կանչուած։

ՎԵՆՆԱ.— Կառավարութիւնը ունգարական սէյմի քննութեան երկու կրօնա-քաղաքական օրինագիծ առաջարկեց, որոնք վերաբերում են ծննդական մատեանները քաղաքացիական պաշտօնեաների ձեռքը տալու և հրէական դաւանութեան խնդիրներին. մովսիսական կրօնին ևս տրուում են քրիստոնէական դաւանութիւններին տրուած իրաւունքները։ Այդպէսով Թոյլ է տրուում նաև քրիստոնեաներին հրէութիւն ընդունել։

Կ. ՊՕԼԻՍ.—Այսօր, Սուլթանի յատուկ հրաւէրով, Թիւրքաց գլխաւորական նաւի ուղեկցութեամբ այստեղ եկան փոխ-ծովակալ Վիննէն և Միջերկրական ծովի վրայի Ֆրանսիական նաւատորմիղի 100 սպաներ։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պոստային կառքերի երթևեկութիւնը Ռազմա-վիրական տրակտի վրայ։

Թէքլուչից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, վերադիմաց հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-8-ին։

Եօթ հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 6-ին, առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-8-ին։

Վլադիմիրովից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ, օրը կէս օրից յետոյ, ժամը 7-8-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-8-ին։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաքում գուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաքում հասնում է ե. ըեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Պոստային գնացքը Թիֆլիսից Բաքու գուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 րոպ.։

Պոստային գնացքը Բաքուից Թիֆլիս գուրս է գալիս առաւօտեան ժ. 6-ին 50 ր. և Թիֆլիս հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաքուից Թիֆլիս գուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.։

Պոստային գնացքը Բաքուից Թիֆլիս գնում է գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիս է գալիս ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Պոստային գնացքը Բաքուից Թիֆլիս գուրս է գալս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՂԻԿ
ՇԱՒՐԱԹԱԹԵՐԹ
Աղջայիճ, Գրիչան և Քալաֆեան

Տարեկան բաժանորդագինն է Ռուսիոյ համար հինգ րուբլի. ուրիշ երկիրներու համար 12 ֆրանկ։
Դիմել՝ առ Տնօրէն-հրատարակիչ Յ. Գ. Փալագաշեան, Կ. Պոլիս, Պահչէ-Գարու, Շէյխ-իւլ-Իսլամ խան։
Hounan Palakachian
Directeur de journal «Dzaghik»
Bahtché-kapou
Constantinople
10—6.

ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑ

ընդունելութիւնը ցերեկուայ ժամը 8-ից մինչև 12-ը և երեկոյեան ժամը 6-ից մինչև 8-ը, վեներականաշուի և ականջի հիւանդութիւնների համար։
Սոլոլաի, Սոֆովայա փ., սեփ. տուն։

ՆՈՅՆ ՏԵՂՈՒՄ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԱՆՆԱՆԵՐ

(Բաղնիք) շքեղ և առողջապահօրէն կահաւորուած։ 50—45

Մի հայ երիտասարդ քաջ հմուտ Ֆրանսերէնէ լեզուի ցանկանում է ու նենալ մի քանի դասեր։ Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատունը։ 10—2

ԼԷ ՀԱՐԴԻՆ

Ամբողջ աշխարհին յայտնի միակ իսկականը

ԱԼԻԶԱՐԻՆԻ ԹԱՆԱՔ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏՃԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ,

արքունի հաստատութիւնների մէջ Հանդիսացած է իրրև առաջին տեսակի, Թեթև ջնջելի, կատարելապէս սև և դիմացկուն։

ԱՄԵՆԱԼԱՒԱՀՆ Է

Գրքերի, վիպագրերի, արձանագրութիւնների և ամեն տեսակ գրութիւնների համար. կարելի է ստանալ Ռուսիայի բոլոր կանցելեարական պարագաների խանութներում։

Աւգ. Լէօնհարդի Դրեզդենում հնարողն է միակ գործարանատէրը։

—Կեղծարարներից խուսափել—

(306 2. հ.) 25 8.

Ամերիկական ատրճանակ «ՄԵՐՎԻՆ»
ամեն կատարելագործուածը մինչև այժմ եղածներից։ Մեծն արժէ 40, փոքրիկը, գրպանինը, 30 ր.։

Մի փողեան արագաձիգ հրացան	Երկփողեան որսորդական հրացան
«ԻԳԼԱ»	«ԲԵԼՄՈՆ»
արձակում է 50, 100 և 200 քալլ, գինը 45 ր.։	արձակում է գարմանալի կերպով. կան 85, 110, 135 և 160 ր. գն.

Իւրաքանչիւր հրացանի հետ տրւում է երաշխաւորութիւն։ Պատկերազարդ պրէյս-կուրանտն ստանալու համար պէտք է ուղարկել պոստային 21 կոպէկի մարկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՉԻՆԳԵԻ ԿԵՊԻՐՈՆԱԿԱՆ ՊԻՈՅ, Բ. ԿՈՆԻՒՇԵՆՆԱՅԱ. 29.

(388 ո. ա.) 25—19

ՁՈՒԻ ՍԱՊՈՆ
ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО. ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.
Ա. ՄՐՈՒԵԻ ԸՆԿ
(M.) 52—14

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՊՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ
Մոսկուայում Աբտուանի Լոպրոնի և Աբրիսոսիմովան ընկերութեան,

ՌՈՅԱԼՆԵՐ ԵՒ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Պետերբուրգի գործարանների
Կ. Մ. ՇՐԵԴԵՐԻ — արքունի գործարան, ԵՂԲ. ԴԻԴԵՐԻԽԻ և ՍՄԻԴՏ ՎԵԳԵՆԵՐԻ։

Ինչպէս յիշեալ գործարանների միակ գործակալ Կովկասում, Թիֆլիսում, ես իմ երաժշտական դեպոյում ունիմ մեծ քանակութեամբ տոյլներ և պաշտօնաթներ։

Ջութիներ, ալտներ, վիոլոնչելներ, կոնտրբասներ, հիներ, քլեյտներ, հոբոյներ, լարեր, տոներ և երաժշտական գործիների բոլոր պարագաները առաջարկում եմ մեծ քանակութեամբ։ Գները գործարանային։ Վաճառում եմ հատով և մեծ քանակով։ Գները կարելի է վճարել մաս առ մաս։ Օտարերկրացիների պահանջները կատարում են անմիջապէս։ Գնած իրերն ընդունում են ուղարկելու տրանսպորտային ընկերութիւնների սակագնով։

Հասցէն՝ Дворцовая ул. д. Тиф. Двор. Зем. Банка, музыкальное депо Б. Мириманяна (317) 25—22

Дозволено цензурою. Тифлисъ 15-го апрѣля 1893 г. Տպարան «Կաւկազ»-ի Типографія „Кавказъ“ Гол. пр. домъ Читахова.